

ԵՐԵՍՈՒՆԵՐԻՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻՏՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրլի. կէս տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мелкъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Խնդրում ենք ընդունել մեր խորին շնորհակալութիւնը այն բոլոր անձանց, որոնք
բարեհաճել էին ցաւակցութիւն յայտնելու մեր կրած անփոխարինելի և դառն կո-
րուստների, մեր օրդի Արմենակի և զուտոր Հեղինէի մահվան առթիւով:

Սիմէօն և Մարգարիտ Թումանեանց

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—Ներքին Տե-
ստիութիւն. Ընթերցողի օրագիրը. Նամակ
Սուրբաթի գաւառից. Նամակ Ղազարի գա-
ւառից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին
լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԻՒԹԻՒՆ. Նամակ
Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—Ար-
տաքին լուրեր. ՀնթԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր ընթերցողներին յայտնի են այն
բոլոր տեղեկութիւնները, որոնք վերա-
բերում են Նախիջևանի գաւառի, Շա-
րուրի, Երևանի և Էջմիածնի գաւառի
դէպքերին: Շնորհիւ մեր բազմաթիւ սե-
փական թղթակիցների, մենք ստանում
էինք անմիջապէս բոլոր կարևոր տեղե-
կութիւնները կարելիին չափ արժանա-
հաւատ աղբիւրներից: Բացի հայ թղթա-
կիցներից յատուկ մեզ համար թղթակ-
ցութիւններ էին գրում նաև Սեմին,
Սինա կեմիլի, որոնք ուղևորվել էին Ե-
րևանի նահանգը ծանօթանալու երկրի
վիճակի հետ: Մենք քանակութեամբ ձեռ-
գրիտ ցուցմունքներ է հաղորդել մեզ նաև
երդուեալ հաւատարմատար Խօսեմ Խո-
սեմի, որ կազմել է զանազան դէպքերի
վերաբերմամբ յիսուսից աւելի արձանա-
գրութիւններ:

Շնորհիւ թէ այդ աղբիւրների և թէ
հայ հոգևորականութեան ներկայացուցիչ-
ների առած հաղորդագրութիւնների, մենք
կարող եղանք ամենամեծ ուշադրութեամբ
հետեւել տեղի ունեցող դէպքերին և նը-
պաստել ձեռք առնելու միջոցներ փա-
ստանալու այս ու այն աշակցութիւնը ու
օգնութիւնը հասցնելու:

Դժբաղդաբար մենք անկարող ե-
ղանք մեր տրամադրութեան տակ եղած
հարուստ նիւթից հրատարակել բոլոր
կարևոր հաղորդագրութիւնները, որովհետեւ
անյարմար էր տեղերի և անձերի անուն-
ներ տալը զանազան պատճառներով, և
նրանք մէջ պատմված էին այնպիսի ե-
ղելութիւններ, որոնք ներկայումս չէին
կարող լոյս տեսնել մամուլի էջերում:

Երևանի նահանգի տնօրէն որբերգու-
թիւնը դեռ չէ վերջացել և թէև խոշոր
ընդհարումներ տեղի չունեն, սակայն ա-
հարեկված վիճակը դեռ շարունակվում
է մեծ տարածութեամբ վրաստանի նոր
գեներալ նահանգապետարից Նապօլէօնի
վրա ծանրացել է մեծ գործ ոչ միայն
խաղաղացնելու երկրի, այլ և առաջն
առնելու մի կողմից զաղթականութեան,
իսկ միւս կողմից անտեսական այն քա-
ջայման, որի մէջ ընկել է ժողովուրդը:
Մենք կը շարունակենք հաղորդել տե-
ղեկութիւններ արդէն բնից և կը ցան-
կանայինք, որ մեր հասարակութիւնը չը
մոռանար իր թշուառացած եղբայրակից-
ներին:

Դէպի Երևանի նահանգի փն սոված տե-
ղեր ուղևորվել են մայրաքաղաքի թեր-
թեր թղթակիցներ, օրինակ «Нов. Вр.» և
«Русское Слово» լրագրիւրի: Վերջինիս
թղթակիցը Նանդ ծածկա ունով արդէն
ուղարկել է մի քանի խոշոր հեռագիրներ:
Երևան է ուղևորվել նաև զանազան
ուսումնական բնակիչներ, որ մի քանի
տարի սրանից առաջ ճանապարհորդել է

Պարսկաստանում և ժողովել տեղեկու-
թիւններ քրդերի մասին: Այժմ Բենե-
դեկան կայցել է արդէն տեղերը և յետոյ
կանցնէ դէպի Պարսկաստան շարունա-
կելու իր ուսումնասիրութիւնները:

«Кавказъ»-ում տպված է Գեներալ Ալի-
խանով-Ավարակու հետեւել պաշտօնական
հեռագիրը.

Նախիջևան, (Երևանի մահապաղ), 13 յու-
նիսի:

«Тифлисский Листок»-ում երկրորդ յո-
ղուածները Նախիջևանի և Շարուրի
գաւառները դործերի մասին՝ մինչ այն
քան յեղաշրջում են ճշմարտութիւնը,
որ կրում են դիտաւորեալ սուտի ընաւո-
րութիւն, որի նպատակն է գրգռել մութ
մասսաներին, խրախուսել անկարգու-
թիւնները և երկարատեւ յուզումներնե-
րը»:

Ալիխանով

Նախ լուր ար գրել. Շարուրի գաւառում,
բաւ երկայնքի յուզումները օր ըստ օրէ բարձ-
րանում է. մայիսի 31 դէպքից վախճալով
50 չափ հայ ընտանիք բարձրանում են, ի-
րանց անձը պաշտպանելու նպատակով, Նախի-
ջևան գիւղ. յունիսի 5-ին, մի փոքրիկ խումբ հա-
յեր խաչկիցներին միջնորդութեամբ, թուով
10 հոգի կարող ճանապարհով ցանկանում են
վերադառնալ Նախիջևանի դրութիւն հա-
կանալու, բայց տարաբախտաբար ճանապար-
հին ենթարկվում են Պիլավայ թուրքերի հրա-
ցանաճգութեանը. հազիւ մէկին աղողվում է
լուր հասցնել գիւղին, մինչև վերադառնալը ա-
ղետի տեղն ոչ ոք չէ երևում, և ինն հոգի
հայերը անյայտանում են թուրքերի ձեռքով:
Հէնց նոր լուր ստացանք թէ Նախիջևանի
գաւառի Փառաքար գիւղացիք չորս հոգի,
Շ. Համազասբեան, Ա. Շաւառեան, Բ. Շեք-
մազանեան և Բ. Աղապուրեանը, Նախիջևանից
մեկնում են կտրուկ ճանապարհով դէպի հայ-
րենիք. ճանապարհին երեք սպանվում են մի
խումբ զինված թուրքերի ձեռքով, կորցնե-
լով 200 բուրլուց աւելի կանխիկ փող, իսկ
Բ. Աղապուրեանին աղողվում է փախչել Նա-
խիջևան: Յունիսի 7-ին, լուր ստացվեց հա-
տատարելից թէ 40-ի չափ ձիաւոր քրդեր
զինված երկում են Նախիջևանի Շարուրի
սահմանագծի վրա, այն է գիւղից 7 վերստ
հեռու. մինչև մի խումբ կողակների հասնելը
քրդերը անյայտանում են: Վերադառնալ գի-
ւղացի Գ. Շեքեան իր մի ուրիշ ընկերի հետ
ցանկանում է երկաթուղով անցնել Երևան,
ճանապարհին Գոսաշանու թուրքերը առա-
ջինիս սրախողող են անում, իսկ երկրորդին
ողջ ողջ այրում: Գիւղերի երթևեկութիւնը
բոլորովին կտրված է, դաշտային բոլոր աշ-
խատանքը հայ գիւղերում 15 երբորդ օրն է,
որ դադարած է, դրութիւնը կրիտեքական է:

Մ. Ժամապարեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԻՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XXI

Այս տնօրէն, արեւմտու օրերում ինչ պիտի
մտցնէ ընթերցողը իր օրագրի մէջ: Գիտեմ
ինչ էք ուզում դուք, գիտեմ ինչ է սպասում
ձեր ծուռամոլի սիրտը: Գոնէ յուսահատական
մի ձիւ, այնպէս չէ: Այո, բայց այդ էլ չէ
կարելի, այդ էլ անհնարին է մեզ համար, թէ
մեր շուրջը քաղերն անգամ խօսում են...
Ու մենք—գրող և ընթերցող—պիտի շեղ-

վենք զլխաւորից, պիտի թողնենք օրվայ ցաւն
ու տաքնապը: Ուրիշ ինչ կարող ենք անել,
կենանք, այնու ամենայնիւ, հաշիւներ է պա-
հանջում իր ուրիշ երեւոյթների մասին: Չը
հնազանդվել նրան: Բայց ինչ օգուտ չը հնա-
զանդվուց:

Ուրեմն, պտոյտ գանք եղելութիւնների շուր-
ջը, դիմենք այնպիսի հարցերի, որոնք երե-
ւոյթներ են կազմում նոյն իսկ այսպիսի դժ-
բախտութեան օրերում:

Ես կը կամենայի ձեր ուշադրութիւնը հրա-
ւերել մի նշանակալից եղելութեան վրա:

Մի քանի օր առաջ վրաց ազնուականները
և մահմետական բէկերը Թիֆլիսում համե-
բախտութեան և եղբայրակցութեան դաշինք
կնքեցին: Նպատակն է մօտեցնել երկու ազ-
գիւր, այսինքն վրացիներին և մահմետակա-
ններին, «կուլտուրական-ստեղծագործական»
գործակցութեան համար:

Նպատակը գեղեցիկ է: Թող նա իրագործվի,
թող նա խօսքից գործ դառնայ, մեր երկրի
երջանկութիւնը առաջ տանող մի գործ, և ա-
ռաջին ծափահարողները մենք, հայերս կը լի-
նենք:

Ես չեմ ուզում մարգարէ դառնալ այս գլխից
և գուշակութիւններ անել: Ես նոյն իսկ չեմ
զբաղվում այդ կուլտուրական ուխտի էու-
թեամբ: Ժողովում տեղի ունեցած մի փաստ
ինձ համար այսօր աւելի մեծ նշանակութիւն
ունի, քան նոյն իսկ այդ ամբողջ ուխտը:

Դա այն ճառն է, որ արտասանեց Մամէդ-
բէկ Արաշիձէն:

Անունը՝ մահմետականի անուն, ազգանունը՝
վրացու: Հէնց այդպէս էլ է ճառախօսը—մա-
հմետական վրացի. նա ներկայացուցիչ էր եկել
այն բաղմամբ վրացի մահմետականների կող-
մից, որոնք ապրում են Բաթումում և շրջա-
կալ գաւառներում:

Իր ճառի մէջ այդ ազգեցիկ կալուածատէրը
ասաց թէ մութ ազդեցութեան, որ այսօր այն-
քան արիւն է թափում Կովկասում մի ինչ-որ
դժոխային նպատակով, փորձեց թշնամութիւն
զգել և կրօնով բաժանված վրացիներին մէջ:
Փորձեց, բայց ոչինչ աղողութիւն չունեցաւ:

Ինչու:
Մենք կրօնով մահմետականներ ենք,—ասաց
Մամէդ-բէկ Արաշիձէն,—բայց մեր երակների
մէջ վրացական արիւն է հոսում, մենք վրա-
ցիներ ենք ու վրաց ազգութեան պատկանելը
պարշտենք ենք համարում: Մենք մեր արեւմա-
կեց եղբայրների դէմ չենք դնալ, որովհետեւ
մենք մի ազգի գաւառներ ենք և մեր մէջ
տարբերութիւն միայն այն է, որ տարբեր
հաւատներ ունենք:

Վերին աստիճանի միութեամբ տալու-
թիւնը են գործում այդ գեղեցիկ խօսքերը:
Եւ ոչ ոք չէ կարող ասել թէ վրացի մահմե-
դականները այդպիսի մի պատուաբեր յայտա-
րարութիւն անելու իրաւունքը չունեն: Նրանք
պահպանել են իրանց մայրենի լեզուն, որով
այսօր էլ խօսում են, նրանք նստած են ի-
րանց պատմական հայրենիքում, ուր վրաց
ազգի իւրեւ ազգ և ոչ թէ իւրեւ դաւանական
մի մարմին դարբեր ընթացում իր համար
ազգային ինքնուրոյնութիւն է ստեղծել: Երբ
կան այս երկու գլխաւոր, հզօր գործոնները,
ինչը պիտի արգելէ որ մի և նոյն ազգի եր-
կու հատուածները ձեռք ձեռքի տուած գնան
իրանց ընդհանուր ազգային հարցերի և պար-
տաւորութիւնների մէջ:

Ոչինչ, ի հարկէ: Այս մեծ ճշմարտութիւնը
բարբառում էր դարերից ի վեր, ամենայնիւ
ժամանակներից, բայց նրան չէին հասկանում
և կրօնով անշատված ազգակիցները ոչ միայն
չէին մտածում միութեան մասին, այլ և իրար
տանջում կեղծքով էին անհաշտ թշնամիների
պէս:

Երբ կրօնը կլանում է ազգութեան, ցեղի,
ծագան հարցերը, երբ դաւանութիւնը, սրտի
ներքին համոզմունքը դառնում է բաղադրական
և սօցիալական կացութեան միակ հիմնաքար,
դա ցոյց է տալիս, որ այդպիսի սկզբունքների
հետևող մարդկութիւնը զարգացման և ինք-

նաճանաչութեան ստոր աստիճանի վրա է
կանգնած: Վրացի մահմետականները իրանց
ներկայացուցիչ բերանով յայտարարեցին, որ
իրանք գիտեն դաժնազանել ազգութիւնը և
կրօնը: Եւ դա մեծ պատիւ է բերում նրանց:

Կրօնների պատմութիւնից յայտնի է, որ
նրանք շատ անգամ են աշխատել ոչնչացնել
ազգութիւնները, ձուլել ազգերը դաւանական
հողի վրա և եկեղեցական սահմանագծերով
բաժանել մարդկութիւնը առանց ուշադրու-
թիւն դարձնելու ցեղերի առանձնատկու-
թիւնների վրա: Այս փորձերը երկար, բայց
միշտ էլ անաշուք, արել են զրադաշտականու-
թիւնը, կաթօրիկութիւնը, յունական օրթո-
դօքսութիւնը: Բայց ամենից շատ այդ ուղ-
ղութեամբ աշխատել է իսլամը: Սակայն իս-
լամի պատմութիւնն էլ հարկաւոր փաստեր
է տալիս, որ արաբը, պարսիկը, լեզգին,
խաֆշիկը զգում էին իրանց ազգային առանձ-
նութիւնը: Իսլամական վարդապետութիւնը
երբէք չը կարողացաւ մի միաձուլ պետու-
թիւն կազմել, թէև առաջնորդում էր իր հա-
ւատացեալներին կենսելու բոլոր ասպարէզնե-
րում և մուսլիմը թէ քաղաքական, թէ հասա-
րակական և իրաւական հարցերի մէջ շարու-
նակ պիտի ականջ դնէ թէ ինչ է առում իր
կրօնը: Եւ թէպէտ այդ կրօնը ամեն մի քա-
լում քարոզում է միութիւն, ընդհանուր կրօ-
նական եղբայրութիւն, բայց դարերից ի վեր
պատերազմները, աւերանքները մուսլիման
պետութիւններին մէջ անպակաս են եղել:

Նոյն իսկ մոնղոլ-թաթարական ազգերը,
որքան էլ ստոր կանգնած լինէին զարգացման
աստիճանների վրա, չենթարկվեցին խլովմի
հաւասարեցնող, միացնող սկզբունքներին: Ա-
պացոյց այն սեղանական, թաթարական անթիւ
ու անհամար մեծ ու փոքր պետութիւնները,
որոնք շարունակ ընդհարվում էին իրար հետ,
տապալում շարքում էին իրար: Եթէ խղումը
միացնող լինէր, մենք չը պիտի տեսնէինք
սուլթան Բայազէտին Լինկթիմուրի ձեռքը
գերի ընկած:

Եթէ կրօնը միջին խաւար դարերում չը
կարողացաւ ազգերը և ցեղերը միացնել, ձու-
լել իրանց հետ, այդ անհնարին է նրա հա-
մար մահաւանդ այժմ, երբ ցեղական և ազ-
գայնական սկզբունքները այնքան զարգացած
են, որ նոյն իսկ սօցիալականների պետ ժո-
րէսը պնդում է թէ չէ կարելի ազգութիւնից
հրաժարվել:

Բայց մեր օրերում մահմետական աշխարհի շո-
վինիստ խմբերը քարոզում են թէ խղումը այ-
սօր կարող է համախմբել բոլոր ազգերը մի քա-
ղաքական և սօցիալական միապաղպղ կազմակեր-
պութեան մէջ: Նրանք հաւատացած են, որ Աֆ-
րիկայի նեգրը, քուրդը, լեւնաբնակ լեզգին, ա-
նապատների մոնղոլը, հնդկը, պարսիկը կարող
են կրօնի դրօշակի տակ հրաաարակ դուս գալ իւ-
ր միատեսակ մտածող միասնական հակումներով
և ձգտումներով դեկլարվող մի ահաւոր կազ-
մակերպութիւն: Նրանց համար չը կան ազ-
գութիւններ, կան միայն մահմետականներ: Ա-
ռանց մեր ասելու էլ հասկանալի է թէ որքան
յետադիմական, որքան միջնադարեան է այդ
իդէալը—կրօնական միութիւն, իրեւ ցեղ. ազ-
գութիւն ջնջող մի գործոն:

Բայց ազգութիւններ կան, ցեղական հա-
կումները կենդանի են: Եւ համալսմանութիւնը,
որ չէ իրազմեցնել հին ժամանակներից, ա-
ւելի ևս անկարող է իրագործվել այժմ:

Ահա ինչու այնքան խոր տալաւորութիւն է
թողնում վրացի մահմետականի ճառը: Եթէ
խլովմ դաւանողները պարծանք են համարում
Վրաստանի գաւառներ լինելը, Վրաստանն էլ
կարող է պարծենալ իր այդ գաւառներին:

Նույն է ամբողջ արտից ցանկալ, որ վրա-
ցիներին ամենալայն չափերով աջողվի կրօ-
նական խտրութիւնների հին անէծքից ազատ-
վել և միացնել վրացի մահմետականներին ընդ-
հանուր ազգային գործի մէջ:

Դրանից անազին օգուտ կը ստանայ հա-
ւամարդկային գործը, որ կրօններով ու դա-
ւանաբանական դրութիւններով չէ ղեկավար-

վում, այլ նկատի ունի աշխարհի առաջադեմութիւնը՝ իրական կեանքի բարձր իդէալները հիմքի վրա: Հաճելի է արձանագրել, որ այնպիսի մի ժամանակ, երբ ձգտում են իսլամը դարձնել մի զինված բանակ, հրապարակով յայտարարում է այն սկզբունքը, թէ կրօնը չէ կարող խլացնել ցեղական սկզբունքները: Հայերի համար դրանք խրատական պիտի լինի մասնագետներ Արաշիճէի ձառքը...

1.

ՆԱՄԱԿ ՍՈՒՐԲԱՆՈՒՅ ԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Դաշնադրում, յունիսի 9-ին Սուրբաթու գաւառի 226 գիւղերից 23-ը միայն հայաբնակ են, մնացեալ 203 գիւղերը թրքաբնակ են և քրդաբնակ են: Հայաբնակ 23 գիւղերից երկուսը—Դաշնադրում և Ալիզադը—անշտառված հայաբնակ գիւղերի խմբից՝ ընկած են գաւառի հարաւ արեւելեան կողմը—Մասիսի բարձրաւունք ու ծէսուտ փէշերի վրա մեկուսացած միմեանցից և շրջապատված բազմաթիւ քրդաբնակ և թրքաբնակ գիւղերով: Մի քանի խօսք Դաշնադրումն մասին:

Դաշնադրումն շրջապատում են Մասիսի կողմից Բուլաղաշ, Բէյր, Թարաշ, Գաֆրեանդ, Խարաւ, Աղաւաղ, Լարաւաշ, Գնդի ձորի, Մախուտ Զիւռ, Զաթիւն Դարա, Աթլի, Լորդան, Միւրէ, Խաւաթի, Բանօք, Զաքարթափ, Շէյխ Միւրզո, Լարաւաշ, Հաւաճաշ, Բանիշուր և Բրէմուս քրդաբնակ գիւղերը: Դաշնադրում կողմից Լարաւաշի, վէրին և ներքին Թոխանալունք, Գիւղալու, Զանաւաշ, Դիւղին, Խարաւ Ալիշան, վերին և ներքին Շէյխաբաշ, Հասան խան, Բիւրիւմ բէկու, Մլո, Ռաւազան, Օթիւլու, Լոաշ-բաղ, Ասաղի թրքաբնակ գիւղերը: Շրջապատված այս չափ գիւղերով կարծես, հասկանալի է այն վիճակը, որի մէջ գտնվում է այժմ Դաշնադրումը, եթէ է նկատի ունենանք նաև թիւրք-պարսկական սահմանը, որանդից իւրաքանչիւր տարի քրդեր անցնելով, յարձակվում և քղում են հայաբնակ գիւղերի նախընթացը: Այդպիսի յարձակումներ, այս տարի, աւելի յաճախ կրկնվեցին, որովհետև Գովկառում, մասնաւորապէս Երևանի նահանգում, թուրք տարրի մէջ առաջ եկան ինչ որ հետաւոր ծրագիրներ, հայ ժողովուրդին թաղանթալու, կոտորելու և բնաջինջ անելու հրէշաւոր միտումներ, որով աւելի խրախուսանք էր գտնում ընտրութիւնից օժտված աւազակաբարոյ թուրք ժողովուրդը:

Այսպէս, ապրիլի 28-ին, քրդերը Դաշնադրումն արօտանելիք ընկնել տարան 2 գոմէշներ, որոնք այժմ գտնվում են ջալալի հոշակաւոր Շէյխ Սալայի մօտ: Այս վկայում են տեղեակ անձնաւորութիւնները:

Մայիսի 2-ին, թիւրքական Սականցի ցեղի քրդեր յարձակվեցին և քրդեր Դաշնադրումն նախընթացը: 190 տաւար և 2 ձի: Հաւաքել զընացին գիւղի մեծ ու փոքրը, որը զենքով և որն էլ անզէն, սակայն չը նայած յաժառ կաւին այնուամենայնիւ անկարելի եղաւ նախընթացը յետ բերել, որովհետև թիւրքահայապատկ քրդերը աշակցութիւն էին ստացել ուսանապատակ քրդերից: Նախընթաց ոչ միայն անց էին կացրել Բէյր, Թաւաշ և Զօրգան Ակօբան գիւղերի մօտով, այլ և այդ գիւղերի քրդերը բացարձակ մասնակցութիւն էին ցոյց տուել Դաշնադրումնիցներէ դէմ մղած կռիւ մէջ: Նախընթաց սահմանը անցկացնելուց յետոյ մի քանի դաշնադրումնիցներ գաւառապետի մի պաշտօնական զրոյթեամբ գնացին Հին-Բայազէտ և այնտեղի հիւպատոսի և փաշայի օգնութեամբ յետ առաջան տաւարները ու բերեցին: Այժմ այդ տաւարը պահվում է սահմանի վրա՝ ենթարկվելով 15 օրվայ կարանտինին:

Մի քանի օր անցելու անցան ունեցաւ յունիսի 3-ին, բայց այս անգամ ուսանապատակ քրդերի կողմից, որոնք լինելու էին Բէյրի գիւղից: Քրդերը ընկնել 4 հատ գոմէշներ, սակայն 5 հրացանաւոր դաշնադրումնից կարողացան գոմէշները յետ խել բերել:

Մի այլ ժողովուրդ այս պայմաններին մէջ հազիւ թէ կարողանար գլուխ հանել, միմիայն դաշնադրումնից կարողացել է իր գոյութիւնը պահպանել այդտեղ:

Իգլիլից 18 վերստ հեռաւորութեամբ, Մասիսի փոված փէշերի ժայռոտ բլուրների և քարաշինքի վրա, հաստատված Դաշնադրումն գիւղը, իր 278 տուն բնակիչներով, նոյնքան կայուն, որքան իր ապառաժոտ հիւրը և նոյնքան խրոխտ, որքան իր դիմաց ցցված հսկայ Մասիսը կարողացել է այնքան քաջութեան անուկ հանել, որ նա մեն մենակ ապրում է

այլազան շրջապատի մէջ, առանց վախի զգացմունք տածելով անգամ: Նրա իւրաքանչիւր մարդը մի տղամարդ է, նրա իւրաքանչիւր կինը դարձեալ մի տղամարդ: Մայիսի 2-ին, երբ քրդերը նախընթացը քաշել էին Դաշնադրումնի քաջերը, Նահապետ Յովսէփեանի առաջնորդութեամբ, Մասիսի սոսկալի զինեցին միջով հալածում էին քրդերին, իսկ կանայք շարաւորվեցին Երևանի հասցեով իրանց ծնողներին քամակից մազկում էին ժայռերի վրա:

Եւ մի գործացէք, ընթերցող, որ Դաշնադրումնից, Գովկառի այս մութ ու խռնակ միջոցին, երբ վայրենի տգիտութիւնը հրապարակ է բերել աւերածների կուտը իր սարսափներով ինքնապաշտպանութիւնից դուրս, յղացել է միայն փայտից թնդանօթ շինել, լըսում էր ընթերցող, փայտից թնդանօթ, որքան ուղղում էր ծիծաղէր և բացականչէր «Փայտ ու թնդանօթ», ես էլ ձեզ հետ ծիծաղում եմ, փայտը աւելի շուտ մի լուցկիից մօխիւր կը դառնայ, բայց գնդակ արձակող գործիք, բայց իրողութիւնը այս է, որ կտրիճ, քաշ մարդու ձեռքում մի կտոր փայտն էլ թնդանօթի ոյժ ունի և որ դաշնադրումնիցներէ քաջութեան համբաւ լսողները հայ, թուրք, թուրք համոզված են, որ դաշնադրումնիցն շինել է մի փայտեայլ իթիլարի թնդանօթ, որով սարեր պիտի շուտ ապա: Եւ այս լուրը հասել է մինչև Հին-Բայազէտ:

Մենք մի քանի մէջ միայն հաւատացած ենք, որ դաշնադրումնիցն հանձնար նրա սրտի, նրա անվերջ կրծքի մէջ է և ոչ թնդանօթ շինելու, և որ նա իր թշնամու դէմ կռուելու երեւակայում է իր թնդանօթները պաշտպանութեան տակ, թնդանօթ արձակելու:

Ա.—Դո

ՆԱՄԱԿ ՂԱԶԱՆԻ ԳԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերին Կարմիր-Աղբիւր, յունիսի 12-ին Երեւ տարի է ինչ մեր գիւղացին հանգիստ սրտով գիւղերնը ընում է. մինչ այդ խելոճը հանգստութիւն չունէր: Սարում, դաշնում, ճանապարհին, նոյն իսկ գնները քաղում տաւարում էին խելոճի յոյսն ու ապաւնը լուծ-եղը. այդ պատճառով նա միշտ պէտք է արթննէ ինչէր: Սակայն բարեխիղճ և ազնուաբարոյ զաւառապետ Արշալույսի շնորհիւ գաւառիցն և աւազակութիւնը իրապաւ լիւրջացաւ և գիւղացին իրականաբար հանգստութիւն էր վայելում: Այս տարի կարծես տեղի ունեցող դէպքերի ազդեցութեան տակ աւազակները կրկին գլուխ են բարձրացնում: Անցեալ շաբաթ սարում օրը ցերեկով Կարմիր-Աղբիւրի օրից 4 ձի են տանում. երկու օր չանցած նոյնքան էլ Մովսէս գիւղի օրից են տանում: Այսպէս եթէ շարունակվի ապագայում շատ զգուշութիւններ պիտի հանդիպեն շաքարեղեցիք: Տոյրես գրելու ժամանակ սաստիկ փոթորիկ բարձրացաւ, որին հետեց իրադառաւ անձրև. իսկոյն եկեղեցու գնդակները դողալեցին, կարկուտով ազատ պահելու համար ցանքը (որպիսի միջամտութիւն): Արտերը լի առատ բերք են խոտանում, եթէ ազատ մնան ընտրութեան պատահանքներից:

Գործիցներ

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ

Եկատերինօղար, յունիսի 10-ին Այսօր ուղարկեցին խմբագրութեանը անունով Խոսի Խոսի ինքնուրեք վեց ուղարկ, յօդուն Երևանի նահանգի խառնակութիւններէ քաշված հայ ժողովուրդի, որը խնդրում ենք հասցնել ուր հարկն է և պատուական թերթի առաջիկայ համարներէ մէկում հրատարակէր նուազագույնի անուանական ցուցակը, որ հետեւան է.—Եղը. Բաղարուկեաններ, Դաւրբէյ Թօրօսեան, Նիկ. Թօրօսեան և եղը. Աւետեաններ 100-ական ուղարկ. Զեքադեան.—Խաւաթաշեան և Միլոտի Բօշորուկեան 50-ական ուղարկ. Ս. Սալաւաթեան, Մ. Ալիազեան (Սօյից) և Ղ. Երկանեան 25-ական ուղարկ. Ա. Հախնազարեան 15 ուղարկ. եղը. Արզումանեաններ, Տիկ. Շապուղաւեան, Գիւրգեան և ընկերութիւն, Լ. Արզումանեան, Վ. Անպաշտեան, Շորոքեանի գործակալաւորներից (միտանդ) և Ա. Ամբեան և ընկ. 10-ական ուղարկ. Մ. Զեքադեան, Պ. Երեկոյան, Յ. Երեկոյան, Գ. Աւագեան, Գ. Դիմիւրջեան, Յ. Գրիգորեան, Կիկ. Ե. Աշարփեան, Գ. Սախաւեան, Մ. Շորոքեան, Ս. Սիւրբեան, Պ. Զեքադեան, Լ. Միւրիկեան, եղը. Գորիլեաններ, Ոմե, Մ. Պապուկեան և Թօրօսեանի գործակալներից (միտանդ) 5-ական ուղարկ. Ա. Առաքելեան, Լ. Մամիկոնեան, Զ. Զարուկեան և Մ. Մաքսեան 2 ական ուղարկ. Ա. Բէշթաւեան և Գ. Զարուկեան 1-ական ուղարկ. Յ. Թօրօսեան և որդին 10

ուղարկ. ընդամենը՝ եօթն հարիւր իննսուն և վեց (796 թ.):

Գ. քն. Զաքարեան Ա. քն. Վարդանեան

Պետրոսիկ, յունիսի 10-ին Համարձման օրը այստեղ կատարվեց հոգեհանգիստ Հին-Նախիջևանի և նրա գաւառի զօրադէ զոհերի յիշատակին. ապա հանգաւանութիւն բանալով այստեղի փոքրաթիւ համարակութեան մէջ ժողովեցին կոտորածի աղետից քառասուններ օգտին 144 թուրքի, որից դուրս գալով 50 կօպէկ փոխադրութեան ծախքը, մնացած 143 թ. 50 կօպէկը այսօր փոխադրեցին խմբագրութեանը հասցնելու ըստ պատկանելոյն:

Ներքինիւր ուղարկում են նաև նուիրատուների ցանկը, որը խնդրեմ ապագայէր «Մշակի» մէջ ի միամտութիւն նուիրատուներին:

Ա. քն. Մարգարեան

ՆՈՒՐԻՆ ԼՈՒՐԻՆ

Երէկ, յունիսի 15-ին Մօսկվայում կայանալու էր քաղաքների գործիչների ընդհանուր ժողով և խորհրդակցութիւն: Այդ ժողովում մասնակցելու են 92 քաղաքների գլուխների ներկայացուցիչները կամ քաղաքագլուխները և 150 ձայնաւորներ:

Ստացանք Նախիջևանի աղետի զոհերի օգտին 1) Ե. Փոլդինեանից 100 թուրքի 2) Եւրօպայի բաշակչիկներին համարից Ա. Իսահակեանի և Յ. Աղասարեանի ձեռքով հաւաքած 19 թուրքի 14 կօպ. 3) Ն. Տէր-Միքայիլեանից (Բազու) 10 թուրքի, 4) Կ. Մակարեանից (Բազու) 10 թուրքի, 5) Ա. Աթաբեգեանից (Բազու) 10 թուրքի: Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 3949 թուրքի 25 կօպ.:

«Berl. Tagebl.» լրագրին Պետերբուրգից հեռագրում են յունիսի 5-ից. «Այս գիւղի Միլկերովի կայարանում, Պետերբուրգից 2 ժամ հեռաւորութեան վրա, ձերբակալեցին ուսու-յիւղափոխականներ ռազմական կազմակերպութեամբ երկու անգամներին: Նրանց բնակած ամառանոցները խուզարկելու ժամանակ, գտան 8 հատ պատրաստի ուռւմ և հարիւրի չափ դեռ ոչ-բոլորովին պատրաստ ուռւմներ: Յետգիւղականների շրջակայ անտառներում բազմաթիւ փորձեր էին անում պայթուցիկ նիւթերով և, ասում է «Нов. Дня» լրագրից, պատրաստում էին սպանութեան փորձ կառավարութեան բարձրաստիճան անձներից մէկի դէմ: (KABE.)

Տեղական լրագրիցնրը հաղորդում են, որ Գօրու գաւառի Բիւսա գիւղում տեղական կառավարութեան իշխան Ա. Երեսուովը հաւաքել է բոլոր գիւղացիներին ընդհանուր ժողովի և յայտնել նրանց, որ աչքի առաջ ունենալով ներկայ ծանր հանգամանքները, ինքը հրաժարվում է աղբաւ գիւղացիներից առնել իրանց հասանելի բաժինը այս տարվայ բերքերից: Թող հաւաքվեն գիւղացիներն ընդհանուր ժողովի և որդեն, թէ ով է աղբաւ և ով հարուստը կամ կարողաւորը, որպէս զի կարողաւորներից տուրքը հաւաքվի, իսկ աղբաւներից ոչ:

Ստացանք հետեւեալ նոր գրերը. 1) «Մարդու կազմուածքը», կազմաւորւմիդ և այլ պատկերներով. հրատարակութիւն Գ. Միլիք-Կարաբողոսեանի, 71 երես, գինը 60 կօպէկ: 2) Կ. Ապրիլեան—«Մի համեստ առաջիկ» և «Անկեղծ բարեգործը», 35 երես, գինը 15 կ. 3) Իսրայէլ Միքաբեան «Այս իմ դարդեր», բանաստեղծութիւններ Ալաշկերտի բարբառով, 32 երես, գինը 10 կօպէկ: (Ստացված օգուտը յատկացվում է Ալաշկերտի Խաստուր գիւղի դպրոցին) 4) Ա. Օսիպով—«Մի ամիս Գ. Պօլսում», ամսական յիշողութիւններ 1896-ի հայկական սարսափներից, թարգմ. Ե. քն. Նալբանդեանի, 80 երես, գինը 20 կօպէկ:

ԴԱՂԵԹԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յունիսի 12-ին, նախաձեռնութեամբ Գրիգոր Ապրիլեանի այստեղի ս. Աստուածածնայ եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ Նախիջևանի և ամբողջ Երևանեան նահանգում նահատակված անմեղ հայերի յիշատակին: Հոգեհանգստի ժամանակ շատերը լալի էին: Պատարագի բանաստեղծները երկու խօսք ստաց կատարվող հոգեհանգստի մասին:»

ԲԵՐԴՈՒՄ գիւղից մեզ գրում են (Կարսի շրջան). «Կիրակի, յունիսի 5-ին, ս. պատար-

ագից յետոյ հոգեհանգիստ կատարվեց մեր պիւղի ս. Յովհաննէս եկեղեցում Հին-Նախիջևանի և նրա գաւառի ու Երևանի վերջին աղետալի զոհերի յիշատակի մասին: Արաքսի քահանայ Բլրցեան մի աղու բարոյով դիմեց աղօթող ժողովուրդին հոգեհանգստի ժամանակ, որ այժմ ես չը պէտք է խնայեմ մեր օգնութիւնը—մեր ունեցած հացից, բաժին հանելով՝ հրդեհի, թաւանի, սրի ու սովածութեան մատնված մեր եղբայրներին: Յիշեալ քաղաքների աղետի դէպքերը սիրտ խոցոտող ապաւորութիւն թողին մեր ժողովուրդի վրա: Հայր Բլրցեանը իր բարոյը վերջացրեց հետեւեալ խօսքերով. «Մեզ մնում է համբարախութեան սերմեր ցանել մեզ շրջապատված թուրք ամբարի մէջ և ինքնապաշտպանութեան դիմել: Շուտով մեր լուծան ես կը հասցնեմ աղետի վայրը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՆՅՈՒՆ

Վան, մայիսի 16-ին Ձեզ ալ յայտնի պիտի ըլլայ, որ երեք տարի է վեր կենտրոնական ուսումնարան մ ունենալու բաղդ ենք ունեցած: Վասպուրականի աղետ ժողովուրդին համար այսպիսի պարտքի մը պէտքը վարուց գալով էր և այս եղաւ շարունակութիւն մը 20 տարի է ի վեր փակուած Հայկազեան-կենտրոնական վարժարանին, որուն կարճատե կեանքը մեծ բարեբաղ պիտի ըլլայ—դեռ չը գիտենք, առ այժմ ուսումնարանը Վանի յայտնի ուսուցչաց ձեռքի գտնուելով և ժողովուրդեան սիրելի լինելով, թերեւ կասկածելի չըլլայ ապագայի յառաջադիմութիւնը:

Ուսումնարանի տարեկան ծախսը 120 օսմանեան լիւրայի կը հասնէ, որուն հանդէպ իբրեւ մուտք ունի 50 լիւրա Սերեբրեակովի կը տակէն, 20—30 լիւրա թողալին և մնացեալ եկեղեցիներուն տուրքերէն: Ձը մոռանալք այստեղ յիշատակել, որ ս. պատրիարքը ոչ մի բանով չի ցանկացաւ օգնել ամենուս սիրելի այս հաստատութեան և նոյն իսկ շնորհեան օր հեռագրաւ մը կարգելուր շնորհութիւնը, իբրեւ անժամանակ, բայց մեր տոկոսն և եռանդուն ժողովուրդին շնորհիւ գլուխ եկաւ գործը յաջողութեամբ: Մի քանի շաբաթ առաջ բարձ. Կօրեւ վարդապետը հեռագրաւ մը կենտրոնականի կտակին ազատումն կիմացնէր, զի այդ կտակը ուսու պետութիւնը յարբուսիս գրաւած էր, իբրեւ ուսանալոյց սպարներ: Այդ հեռագիրը մեծ ուրախութիւն պատճառեց մեզ, մտածելով, որ ազատած կը լինին նաև ս. էջմիածնի հնաւանդ կառավարները և վերաբացուած դպրոցները:

Սանդիսեան օրերուցաւ ուսումնարանը միակ ազգային օրերուցաւ ուսումնարանն է Վանայ մէջ. բայց ցաւ է սիրտ պէտք է ըսել, որ ցայսօր չունեցաւ կանոնաւոր ուսուցչուհի մը: Աճէմեան ընդերը իրենց երկարատե ուսուցչուհիութեամբ անպէտքացած են: Ասոնցմէ մէկը Կովկաս եկաւ բան մը սովորելու համար, բայց Պարսկաստանին մէջ ուսուցչուհի ըլլալն լրացած են: Եթէ լաւ մարդկանց ձեռքին ըլլայ, շատ օգտակար ըլլալ, զի մօտ 120 լիւրայի մուտք մը ունի:

Յայնկայնսերու թաղին մէջ երկու տարի է ի վեր գոյութիւն ունեցող աղջկանց փոքրիկ վարժարանը 60 լիւրայի օգնութիւն մ ունեցաւ, որով կը յուսացուի այդ նորաբաց ուսումնարանը յառաջագոյն յիշողութիւններ 1896-ի հայկական սարսափներից, թարգմ. Ե. քն. Նալբանդեանի, 80 երես, գինը 20 կօպէկ:

Վանայ յառաջադէմ համարված Երամեան որբանոցը (անունով միայն որբանոց, այլ հարուստանոց) ոչ պակաս նիւթականի տեղի թիւն կը կրէ, թէպէտ քանիցս Պօլսոյ թերթիւն մէջ հանգանակութեան ելաւ և պատրիարքը ամենայն կերպով աշակցեց այդ գործին:

Մ. Գրիգորի վանուց աղջկանց որբանոցն ալ փակուելու վտանգէն ազատելու համար անմիջական օգնութեան պէտք մ ունի. միակ ազգային հաստատութիւնն է, ուր աղջկանք կը խնամուին:

Դրութիւններն այժմ բաւականին լաւն է, կուսակալին շնորհիւ, միայն թէ ստակի սահմանութեան պատճառով ժողովուրդը կը նեղուի, ամեն ինչ կրկնապատկել կամ կէս անգամով թնդացել. հացին չափը 70 զրուշ է, պանիրին լիւրը 20 զրուշ, մսին օխան 6 զր. ժամիկի նուկին 40 լիւրա և այլն, միայն ձուկն է արժան: Ցանքերի լաւերը թերեւ ընչ յե-

Электротечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мад. ул. № 15